

ԿՈՍՄՈՍԻԿ ԳԱՐՈՒՄԵՏ

(Suite musicale)

Զօն՝ Արտային

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հեռուն, հեռուն մեր հայրենի դաշտերուն վրայ մրդառատ,
Այս առաւօտ հաղար դոյներ կը ճաճանչեն խանդակաթ.
Այժ ու դառնուկ լուռ մընալով եւ թռչնիկներ անդայլայլ
Ականջ կու տան սրինդի անլուր այս նըւագին, հողեղմայլ:

Եւ այս տօնի, այս արբունքի հըրաչքին մէջ անսովոր,
Հեղ տընակի խոնարհ որդին՝ թողած դորով ու օրօր,
Նորածինին նոր օրօրներ, ծերունիին նոր տաղեր,
Իսկ գեղջուկին նոր երգերով մէկտեղ կու տայ մեղր ու սէր:

Զոյգ ոտքերով կարծես կամար մըն է կապած յաղթական.
Մէկն Արաղածը կը կոխէ, միւսն ալ Մասիսը Հայկեան.
Ճակատ տըւած է երկնքին, մըրթիկներուն ալ թիկունք,
Որ պահպանէ միշտ անաղարտ՝ Հայոց երգերը մասունք:

Լայնատարած բազուկներով, ողջ հայրենիքն է գրկած,
Որ կը խռովի, կը մեղմանայ՝ մէկ շարժումովն իսկ յանկարծ.
Ողջ հայութիւնը միաբերան կապած հսկայ երգչախումբ,
Կը գինովնայ իր երգերով խմբելով ումպ առ ումպ:

ՍԻՐԱՅԻՆ

Զեռքին քընար եւ շրթներուն անոյշ երգերն անպակաս,
Սիրերգներով սիրոյ ցաւէ՛րը կը բուժէ Կոմիտաս...
Սայեաթ Նովան Քուչակին հետ կապող նարօտն է ոսկի,
Ու իր բերնի գինին խմողն՝ ինչպէս գինի կ'արեւնի:

Տուր որ խմեմ սափորէդ,
Եւ զովանամ համբոյրէդ,
Մարօ ջան.

Առանց քեզի անլոյս եմ,
Բայց չես տեսներ որ կոյս եմ,
Կարօ ջան.

Զէնքը թողում բռնեմ սաղ,
Որ ինձ չընես այսքան նաղ,
Անոյշ եար.

Վարդի նման աղուոր ես,
Բայց տակաւին գինուոր ես,
Քնքուշ եար.

Երնէք քեզ հետ ապրողին,
Ափսոս քեզ խօսք վասնողին
Անհամար.

Աղբիւրի ջուրը վըկայ,
Աշխարհ նըմանդէ չըկայ
Ինձ համար.

Սպիտակ ձիով քեզ տանեմ,
Այս տանջանքէն քեզ հանեմ,
Իմ պըճուր.

Տեղ չեմ երթար, խաչ վըկայ,
Եթէ... գիշերը չեայ,
Իմ ճպուռ:

Սիրտը Գողթան երգիչներու զարկերուն հետ կը տրոփէ,
Ու ձայն կու տան իր հողիին մէջ ջութակներ թաւիչէ.
Նըւագածու մեր հընամեայ աշուղներուն հլու աչկերտ,
Հասակ ցըցած անոնց կողքին՝ Վարպետներուն մէջ Վարպետ:

ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ

Երբ արտերէն կ'անցնի սըրինգն իր հովուական սուլելով
Կանգ կ'առնեն պահ մը արջառներ ու հովիւներ հոգեթով.
Իր փիլոնի քըղանքներուն կը բոլորուն հանդարտիկ
Վայրի թռչունն հաւուկ դարձած եւ չար դաղանը՝ եղնիկ:

Իմ կորովի եղբս, եկ,
Կախեմ վիզէդ մէկ առ մէկ,
Յուռութունք, հմայեկ.

Զարկ բոժոժներդ ժիր ժիր,
Քուկըդ են հողն ու երկիր,
Վարձքդ արդար է, հըճուիր:

Եկ, ոստոստուն արտուտիկ,
Կարմրուկ կտուց, սեւ տոտիկ,
Բերես վարուն ու ծաղիկ.

Բացուէ մեխակ ու կակաչ,
Հագուէ կարմիր ու կանաչ,
Շիկնող թերթիդ հաղար պաչ:

Եկուր հնձուոր ու հերկող,
Քեզի մատաղ ըլլամ թող,
Սուրբ քրտինքիդ աղօթող.

Քեզի համար չըկայ տօն,
Չըկայ արեւ, չըկայ թօն,
Ձայնըդ դալար, արահօ՞ն...:

Թեւ առէք ծիտ ու ծիծառ,
Ճիւղ տըւէք ծառ ու մացած,
Գրկուինք որպէս սիրահար:

Ձայնը կարկաչ, գեղեցիկանոյ՜ սոխակներու մէջ չաստուած,
Կարծես հրատապ Նաւասարդեան արշալոյսէ մ'է ծաղած.
Երբ երազկոտ կը նուազէ՝ մատները փունջ կը կապեն,
Երզն ալ բերնին կարծես շուշան մըն է քաղուած այդ փունջէն:

Պ Ա Ր

Հարսանեկան խնջոյքներուն իր ձայնն է միշտ թամատան,
Ու այն ատեն կարծես հազար դափ ու թմբուկ կը թնդան.
Իսկ Վարպետի մատները նուրբ լարերուն վրայ երբ սահին,
Հարս ու փեսան թեւ թեւի մէջ պարի կ'ելլեն տարփառին:

Մէջքըդ օղակ դալարէ,
Փէշըդ արագ ոլորէ,
Շուշոյ ջան.

Նուազէ սազը ձեռքիդ,
Ու երգէ խազը բերնիդ,
Հոյ, հոյ ջան:

Դուն ալ դարկ ծափ ու ծնծղայ,
Ոտքովըդ չափ տուր, տըղայ,
Սաղօ ջան.

Թրթուուն կիքառըդ լարէ,
Աշխոյժ քու պարըդ պարէ,
Հոյ, հոյ ջան:

Ղուրպան եղէգ հասակիդ,
Պաչ տամ հրաշէկ չրթունքիդ,
Շուշոյ ջան.

Դէմքս եկուր որ վառիմ,
Դուն ալ պաչ տուր որ հալիմ,
Հոյ, հոյ ջան:

Այս ի՞նչ գըւարք կը պարես,
Ինձ համար վա՞րդ թէ եար ես,
Սաղոյ ջան.

Շուտ շուտ դառնամ նուաղիմ,
Գիրկըդ իյնամ ու մեռնիմ
Հոյ, հոյ ջան...:

Խենդ շուրջպարերը վերջացան. դո՛հ են դոյզներն ու ժպտուն.
Սակայն Վարպետը չնչասպառ, ճկուն մատներն ալ՝ արին,
Կը փայփայէ թոյլ թոյլ լարերը իր փշրած քընարին.
Արեան գընով իսկ տալ ծիծաղ... այս է օրէնքն իր պարին...:

ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ

Հսկումի պահն է Վարպետին. ձեռքին տաւիղ բեհեզէ
Եւ չրթներուն Նարեկացին նոյնինքն իջած կ'աղօթէ.
Իր աղերսանքը կերտնի բոցի մը պէս կը հալի,
Խունկ դառնալով քուլայ քուլայ դմբէթն ի վեր կը թռչի:

Տաճար եկեր եմ, Աստուած,
Աղօթելու, երգս ըրած
Շարական.

Հա՛յր, տուր որ միտքըս բոցուած,
Տուր որ մարմինըս խոցուած՝
Սպիանան.

Հա՛յր, ես որ սէր ցանեցի,
Ոխ ու աւեր հնձեցի
Միմիայն.

Ես որ տըւի պար ու երգ,
Ստացայ հարուած, ստացայ վէրք
Սրտիս վրան.

Ըրի Անունըդ աղօթ,
Քաղեցի դոյժ ու վառօթ,
Բայց նորէն

Բաշխեցի դուրս, ալելուք
Ու կրեցի կրակ ու սուղ
Եղեռնէն.

Հա՛յր, կարդացի թէ այսպէս
Սիրածներուդ կը փորձես
Երկրիս վրան.

Հիմա գիտեմ թէ, ո՛վ Տէր,
Հայր ի՞նչքան շատ սիրեր
Ես, ի՞նչքան...:

Ա՛լ իր խուցին մէջ մենաւոր աղօթքին հետ կը մարի.
Հարիւր զանգեր, հազար հրեշտակ կ'օծեն Վարպետը բարի,
Ղօղանջներով, սաղմոսներով եւ բոյրերով դիւթական.
Իր կեանքը կարճ, լեցուն հրապոյր կ'անցնի երգի մը նրման:

Ա.Բ.Է.Բ., 1969 Նոյեմբեր

ՅԱԿՈԲ ՀԵԼԱԼԵԱՆ